Self FLOQSwabs®

Copan
innovating together

ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ՁՈՂԻԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԲՈՒԺԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ

Ձողիկը նախատեսված է հեշտոցային նմուշի ինքնուրույն նմուշառման համար:

- Ձողիկի փաթեթավորումը բացեք օգտագործումից անմիջապես առաջ:
- Մի օգտագործեք հղիության ընթացքում կամ ծննդաբերությունից հետո առաջին երեք ամիսների ընթացքում:
- Նմուշառման ընթացքում զգույշ եղեք, որ ձողիկը չհպվի որևէ մակերևույթի:
- Նախքան նմուշառումը սկսելը լվացեք ձեռքերը:
- Ընդունեք Ձեզ հարմար դիրք և վերցրեք նմուշը:
- Նմուշառման ավարտից հետո վերադարձրեք ձողիկը՝ հետևելով առանձին տրամադրված ցուցումներին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե նմուշի ինքնուրույն վերցման ընթացքում առաջանան անհարմարություններ կամ անսպասելի իրավիճակներ, որոնք նկարագրված չեն ցուցումներում, դադարեցրեք գործընթացը և դիմեք Ձեր բժշկին:

Self Vaginal FLOQSwabs®

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՊՇՌ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸ

ՊՇՌ հետազոտությունն իրականացվում է հեշտոցային նմուշառման միջոցով:

- ✓ Հետազոտությունից առնվազն 2 ժամ առաջ չդատարկել միզապարկը:
- ✓ Հետազոտությունից 24 ժամ առաջ հրաժարվել անտիսեպտիկներից և հիգիենայի այլ միջոցներից:
- ✓ Հետազոտությունից 48 ժամ առաջ հրաժարվել ներհեշտոցային տամպոնների կիրառումից:
- ✓ Հետազոտությունից 72 ժամ առաջ հրաժարվել ալկոհոլի օգտագործումից և սեռական հարաբերությունից:
- ✓ Հետազոտությունից 2 շաբաթ առաջ դադարեցնել հակաբիոտիկների, հակասնկային և հակավիրուսային դեղամիջոցների ընդունումը:
- ✓ Հետազոտությունը պետք է կատարել դաշտանային ցիկլից ոչ ուշ քան առնվազն 5 օր առաջ, կամ ոչ շուտ քան ցիկլը սկսելուց 5 օր հետո:

Սկանավորե՛ք **QR** կոդը,
ծանոթացե՛ք նմուշառման մանրամասն տեսացուցումներին՝
գործընթացը ճիշտ և անվտանգ իրականացնելու համար:

Ճիշտ նմուշառումը ճշգրիտ հետազոտության գրավականն է